ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Տեքստուորլդ ՍՊԸ	Տեքստուորլդ ՍՊԸ	Կոստյում՝ տաք, կինոլոգիական /բաճկոն, տաբատ և կեպի/: Կոստյումը նախատեսված է կինոլոգ հրահանգիչների համար, պետք է ունենա հարմարավետ ձևվածք, չսահմանափակի շարժունակությունը հատուկ գործողությունների ժամանակ: Պետք է պատրաստված լինի 235-245 գրամ/մ2 խտությամբ հակաստատիկ, անջրաթափանց գործվածքից, գույնը՝ սև: Գույնի կայունությունը լվացման, չոր շփման և քրտնքի նկատմամբ նվազագույնը 4 բալ: Բաճկոնի առաջամասը և թիկունքամասը մշակված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը մզդակարված է անջրաթափանց շերտով, իսկ թևքերը՝ 120 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը մզդակարված է անջրաթափանց շերտով: Աստառը՝ մուգ գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը՝ 100 % վիսկոզա: Թիկունքը վերին կտրվածքով, կոկետկայով, Բաճկոնի առջևի մասում պետք է լինեն կրծքամասի և գոտկատեղի ծավալային զույգ գրպաններ, որոնք փակվում են կափույրներով, կոճկվում՝ մեկական մեծ (24-25մմ տրամագծով)

			կոճակներով, ձախ ծոցագրպանը կոճկվում է կոճակով և կտորե օղակով: Բաճկոնը կոճկվում է մետաղական կամ պոլիմերային շղթայով, վրադիր կափույրը ամրանում է մետաղյա 5-6 հատ կոճգամներով: ՈՒնի բարձր օձիք և կարգավորվող կապյուշոն: Կրծքավանդակի աջ և ձախ կողմերում, թևերի վրա ինքնակպչուններով ամրացող տարբերանշաններով: Թևքերի դաստակային մասերը մշակված են զույգ կոճակներով և չափսը կարգավորող, 4սմ լայնքով, 8-10սմ երկարությամբ ժապավեննրով, վրան կոճակի օղակներով: Թևքերի ներքին եզրերը մշակված են 4.8-5.2 սմ լայնությամբ մանժետով, մանժետի հետնամասը մշակված է գաղտնի էլաստիկ ժապավենով: Թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում է սեպաձև տեսքով 7.0×9.0 սմ չափսի, կանաչ գույնի կպչուն ժապավեններ, որոնց ամրանում են ասեղնագործ խորհրդանշանները՝ ՀՀ ԱԱԾ թևքանշանները: Ասեղնագործ ինքնակպչուններով գրվածքների, ՀՀ ԱԱԾ տարբերանշանների նմուշները , ըստ քանակների կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, Կատրողի կողմից ներկայացվող 3 հատ տարբեր չափսերի և հասակների նմուշների հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Տաբատի վրա պետք է լինեն կողքի գրպաններ և առջևի լրացուցիչ ծավալային բեռնատար գրպաններ ազդրերի վրա: Գրպանները փակվում են կափույրներով, կոճկվում՝ մեկական մեծ (24-25մմ տրամագծով) կոճակներով: Գոտին՝ 5.3-5.5սմ լայնքով, գոտեմակողների լայնությունը 3.5-4.0 սմ, 6-8 հատ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Ձմեռային կեպին բաղկացած է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից, հատակից և ականջակալներով ծոծրակամասից: Երեսացուն՝ նույն կոստյումի գունաքողարկված գործվածքից: Աջ ականջակալին կարվում է՝ 8 սմ երկարությամբ տիսմայե ժապավեն, որի վրա ամրացված են 2 հատ մետաղյա կոճգամի մտնող մասերը ականջակալի

			եզրակարից դեպի ներս՝ 1-ինը 2սմ, 2-րդը՝ 3-4սմ հեռավորության վրա, իսկ ձախ ականջակալի վրա եզրից դեպի ներս 2 սմ հեռավորության վրա ամրացվում է՝ 1 հատ մետաղյա կոճգամի ամրացվող մասը: Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Ականջակալներով ձմեռային կեպին կարվում է մոխրագույն արհեստական մորթուց, 890 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ, մորթախավի բարձրությունը՝8-10մմ: Ականջակալ-ծոծրակամասի մորթին մշակվում է եզրերից 5-7մմ հեռավորության վրա՝ զարդակարով: Ներսամասը 5-6 սմ կողմերով քառակուսաձև մգդակարվում է 142 արտիկուլի կամ համարժեք մոխրագույն կամ պաշտպանական գույնի բամբակյա կտորից (բիազ), ներսից տաքացնող ներդիրը մշակված է 100 գրամանոց սինտեպոնով: Հովհարի ներսից ներկարվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Եզրից դեպի ներս 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Գլխարկաբոլորքի բարձրությունը, սկսած 54 չափսի գլխարկից, պետք է լինի 8,8 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ծոծրակամասի բարձրությունը՝ սկսած 54 չափսի գլխարկից պետք է լինի 8,2 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Կեպիների հովհարը արտադրվում է կլորավուն (կիսալուսնաձև) 1,8-2,3մմ հաստությամբ և մեջտեղի մասում 6,0-6,5 սմ լայնությամբ: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է ալյումինե համաձուլվածքից, օվալաձև դեղնականաչավուն գույնի գլխարկանշան՝ 32 ճառագայթով, կենտրոնում ԱԱԾ խորհրդանիշով: Պիտակավորումն ու փաթեթավորումը: Բաճկոնի ձախակողմյան փեշի ներքևի եզրից 5.0-7.0 սմ բարձրության վրա, ներսի կողակարին կամ ծոցագրպանին, տաբատի գոտու ձախ ներսամասին պետք է կարված լինեն պիտակ (կամ պիտակներ): Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, չափսը, արտադրող և/կամ մատակարար

			կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, լվացքի և խնամքի վերաբերյալ տեղեկատվություն: Բաճկոնի վերին կոճակից կամ շղթայից պետք է կախված լինի չափս-հասակային ստուգիչ պիտակ, վրան նշված՝ տեսականու անվանումը, չափսը, արտադրող և/կամ մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը,: Փաթեթավորումը առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Կրծքանշանները առանձին- առանձին փաթեթավորված: Արկղերը պիտակավորված կամ տպագրված 10սմ*15սմ չափսի պիտակներով, որոնց վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Գլխարկների փաթեթավորումը՝ գործարանային, արկղով, արկղի մեջ՝ երեք շարք, յուրաքանչյուր շարքում 15 հատ առանձին-առանձին՝ ընդամենը 45 հատ: Արկղում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
3			